

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2012թ. արտաքին առևտրի վերաբերյալ տվյալները: Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության և վիճակագրական դիտարկումների տվյալները:

Ժողովածուի մեջ բերվում են արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱԱ) դիրքերի(ենթախմբերի)՝ 4-նիշի մակարդակով, ինչպես նաև առանձին՝

- ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների (իրավաբանական անձիք)
- ըստ ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի տվյալների:

Արտահանման ծավալներում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում ընդգրկված չեն շրջանառության մեջ գտնվող արժեթղթերը, թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

Արտահանման ծավալները հաշվարկված են ՖՕԲ գներով, իսկ ներմուծմանը՝ ՄԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի սահման):

Արտահանման և ներմուծման արժեքային ցուցանիշների հաշվարկի համար, ազգային դրամի վերահաշվարկումն ԱՄՆ դոլարով կատարվել է՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի ամենօրյա պաշտոնական փոխարժեքի:

## I n t r o d u c t i o n

“Foreign Trade of the Republic of Armenia for 2012” statistical handbook covers data on foreign trade of the republic for 2012. Customs declarations and statistical surveys data were as a basis for the handbook materials.

In the handbook the exports / imports volumes (in kind and value) are presented according to the Commodity Nomenclature of External Economic Activity subgroups by 4-digits codes and also

- by the customs declarations data (legal entities),
- by data on trade organized by physical persons.

Both commodities of local production and re-exported goods of foreign production were included in the volume of exports, and commodities of foreign production consumed and re-exported were included in the volume of imports.

Exports/imports volumes did not include securities, money in circulation, monetary gold, transit transportation of foreign goods through the territory of the republic, commodities sent or brought for exhibitions and fairs.

Exports volume was calculated in F.O.B. prices, and imports volume in C.I.F. (including insurance and transportation costs up to the border of the importing country).

For export/import value indicators' calculation, the recalculation of national currency into US Dollars was done according to the official rate of the Central Bank of Armenia.